ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2012 թվականի թիվ 26- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012թ. փետրվարի 13-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում լրացում կատարելուն համաձայնություն տալու մասին> N 92- Ա որոշումը՝

ո ր ո շ ում ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության՝

1) պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-2.1-1/ անձնագրի 11-րդ կետը <լ> ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <լ¹> ենթակետերով.

< լ¹) համակարգում է սոցիալական փաթեթից օգտվող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարների և փոխանցվող գումարների հաշվառման,տրամադրման և փոխանցման հետ կապված աշխատանքները.>.

2) հաշվապահական հաշվառման բաժնի վարիչի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-2.2-17/ անձնագրի 11-րդ կետը<թ> ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <թ¹> ենթակետերով.

<թ¹) ապահովում է սոցիալական փաթեթից օգտվող աշխատակիցների փոխհատուցվող գումարների հաշվարկման և փոխանցման աշխատանքները.>.

3) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-4.1-25/ անձնագրի 11-րդ կետը <զ> ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <զ¹> ենթակետերով.

<զ¹) իրականացնում է սոցիալական փաթեթից օգտվող աշխատակիցների փաստաթղթերի հավաքման և փոխանցվող գումարների հաշվարկման աշխատանքներ.>.

4) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-4.1-26/ անձնագրի 11-րդ կետը <ը> ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <ը¹> ենթակետերով.

<ը¹) իրականացնում է սոցիալական փաթեթից օգտվող աշխատակիցների փաստաթղթերի հավաքման և փոխանցվող գումարների հաշվարկման աշխատանքներ.>.

5) հաշվապահական հաշվառման բաժնի առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-4.1-27/ անձնագրի 11-րդ կետը <զ> ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր <զ¹> ենթակետերով.

<զ¹) իրականացնում է սոցիալական փաթեթից օգտվող աշխատակիցների պարտադիր սոցիալական վճարների և փոխանցվող գումարների փոխանցումներ.>.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ.փետրվարի 22
ք.Իջևան